

ՏՆՈՒՆԵՆ - ԽՄԱՌՈՐԵԱՆ  
 7. ՄԱՍՈՒՐԵԱՆ  
 ԲԱՅՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
 ՏԻՐՆԵՆ 500 ՂՐԱ  
 ՀԵՅԱՍՏԵՍՑ 250  
 ԵՌԱՍՏԵՍՑ 150  
 Բաժանորդագրութիւնը կ'սկսուի  
 ամեն ամսոյ 1 թիւէ 15 ֆ)



Fondateur  
**M. Mamourian**  
 Directeur - Rédacteur en chef  
 H. MAMOURIAN  
 ARÉVELIAN MAMOUL,  
 JOURNAL ARMÉNIEN  
 QUOTIDIEN

ՕՐԱԳԻՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՔԱԿԱՆ

100 ՓՈՐԱ

100 ՓՈՐԱ

# ՊՕԼՍԱԿԱՆ ԵՍՄՍԿԱՆԻ

(Մեր մասնաւոր թղթակցին)

Կ. Պոլս. 8 Հոկտ. 1919

Լրագրական աշխարհին մէջ դարձեալ նոր շրջափոխութիւններ պատահեցան: Հնչակեան կուսակցութիւնը սկսաւ հրատարակել երկէր անուն օրաթերթ մը: Ժողովուրդի մշտնջենական ձեռնարկը ըլլալէ դադարելով եղաւ Սահմանադր. Ռամկավար կուսակցութեան բերանը: Տիգրան Զաւէնի ժողովուրդը առաջնան աջակցող ըլլալէ դադարեցաւ գիշերուան բուն ըլլալու համար:

Բլե-պոլսիէն դեռ երկուսքի մէջ է և կ'երևայ թէ զեռ ասպարէզ գալու պիտի ուշանայ:

Իսկ գրական երկու հանդէսներու հրատարակութիւնը, որոնց կ'սպասուի բաւական ատենէ ի վեր զեռ լոյս աշխարհ չեկան:

Ո՛չ Տօթթ. Թոմիզեան և ո՛չ Միքայէլ Շամտանձեան իրենց Հայաստանը և Ուրաղը չկրցան հրատարակ հանել, վասնզի անոնք կ'երևայ թէ Մ. Պարսամեանի յանդգնութիւնը և քաղաքական ձեռնածուրթները չունին Զոհման ընտել թէ նոր-կիսմտ որ որ պահ մը Հնչակեան կուսակցութեան արամադրութեան ներքե զեռ կը մը տառուէր: Նրեթական պատճառներով իր հրատարակութիւնը դադարեցուց: Երուանդ Տ. Անդրէասեան գործիչ պիտի դառնայ իր ուսուցչական ասպարէզը ուր անհամեմատ կերպով կ'ընայ օգտակար ըլլալ: Տ. Անդրէասեան հայերէնի հազուագիւտ վարպետներէն մէկն է և հայ լեզուն կը ճանչնայ այլքան խորապէս իրեն չափ Հայկաբանութեան նրբութեանց մտէն գիտակ միտքեր գործէ շին հիմա, բացառութիւն կազմելով Գուրեան ելլելէ Արքայութի և Միսիսթրեան Միսիսթրեան և Պոլսիական Տաշեանի, Մէլիքեանի, Ազգիկեանի և իւր պէս մի քանի գէթեր:

Լրագրութիւնը իր անհետացումով շատ մեծ կորուստ մը չընէր: Վասնզի իր գերը կատարողներ կան և կ'ընան հասելի, սակ' ին քաջ հայկաբաններ գ'երէն չկան և չեն՝ ալ հասնիր: Ազգագրական կամ մշակութային կուսակցութեան գեթ պայքարող ուժ մը ահա երևան եկաւ՝ կուսակցութեան մը վրայ կ'առնու: Ժողովուրդի մշտնջենական ձեռնարկը ըլլալէ առաջ Տիգրան Զաւէնի խմբագրութեան ատեմաթ և Մոսիսթրեան - Տէմուրաբաբա բայց ոչ Հնչակեան այլ միջազգայնական, սեղանութիւն ունէր: Հիմա անիկա այլ պայմանի կ'ըլլայ շնորհիւ իր Սասն. Թեմակավար վարիչներուն:

Շտեմբերական թիւէն զուրկ չէ կարծեմ հոս պարզել անձուզարմ մը որ տեղի ունեցաւ Ժողովուրդի մշտնջենական շուքը և որ միայն հպանցիկ կերպով արձանագրուեցաւ Կ. Պոլսոյ մամուլին մէջ:

Սահմ. Ռամկավար կուսակցութիւնը ժողովուրդի մշտնջենական ձեռնարկը գ'ննելէ յետոյ ծըր-ըղբած է անոր անունը փոխել և Հայերէն անուն տակ հրատարակել, Յովհ. Շահնազարի՛ կ'ըսեն ընդ Հայերէնի ի

տնօրէնին խմբագրութեան մասին: Յովհաննէս Շահնազար որուն Հայերէնի իր համբաւը կը զգարուի Երուանդ Օտեանի, Արփար Արփարեանի, Է. Ան Փաշալեանի, Հրանգի, Չօպանեանի, Չօհրապի և այլոց գործակցութեան, ատրիներու յառաջնամաս աւելի շնչուած յաւակնութեամբ մը լիցուած, անցաւ գործին գլուխը և առաջին քայլէն սկսաւ վարել թերթը այնպէս որ կարծես թէ անիկա ըլլար իր անձնական սեպհակառութիւնը:

Կուսակցութեան մը օրգանը ըլլալու սահմանուած թերթի մը խմբագրութեան կը կարծենք թէ պէտք չէ ըլլայ անհատապարտ այլ պէտք է իր անձն մրախառնէ կուսակցութեան հետ և անոր ընդգրկած ուղղութեամբ շարժի: Եթէ չի գիտայ որպէս իսկ անկախ է այդ գործը վարելու: Մի քանի օրուան մէջ Յ. Շահնազար ցոյց աւելաւ թէ զուրկ էր կուսակցութեան արտայայտիչը ըլլալու և կ'գտնուի նը անհատապարտ իր կողմէ: Յովհ. Շահնազար տեղի տուաւ և թողուց ժողովուրդի մշտնջենական ձեռնարկը: Կարծես թէ իւր հետեւողը եղաւ Հայերէնի վերական հրատարակութեան գաղափարին լքանումը և Յովհ. Շահնազար ի հեծուկ իր այս չեզոքացման վերջին կարգադրումը: Մասնակցութիւն խոստանալը:

Գալով Հնչակեան օրգանին մեծ բան մը ըլլալ չի խոստանար: Երկու էջով կը հրատարակուի: Ընթերցողներու որքան լայն շրջանակ մը ունենայի ալ յայտնի չէ, վասնզի Հընչակեաններու շատ մեծ թիւ մը չեն թաղուի որ գտնուի Կ. Պոլսոյ և Գաւառներու մէջ:

Միայն թէ երկրի հրատարակութիւնը ապահովուած է կ'ըսուի Ամերիկայի Հնչակեան մասնաձեռնարկու խրկած գլոմարներով, որոնք ապահով բար ուսման պիտի վասնուին: քանի որ կ'արեւելութիւն չկայ սակաւաթիւ ընթերցողներու թիւը վրայ հիմնուած, օրօթերթի պէս բազմաթիւ ձեռնարկի մը տակէն կ'ըլլայ:

Ապահովագրար մէկ տարուան ընթացքին «Երկիր»ը պիտի առնու ան կոչ 7-8000 սակի, որ աւելի բուն երկրին պէտքերուն գործածելով, Հնչակեանները աւելի մեծ ծառայութեան կ'ընեն: Գաւառը կ'ընեն ընդ իրենց քարտէսով մտղավարի մը որ զեռ պատկարակութեան շնորհաւորած չունի, պատկարակութեան պայքար բանալու համար:

Պոլսոյ լրագրական աշխարհի մէջ շատ անտեղի և ճիծաղելի վեճ մը բացուեցաւ վերջերս երկու մեծ թերթախնամակներու միջև: Այս վեճին մէկ հարան էր գրական ինքնակոչ պահալը Յովհաննէս Ապալտ որ վերջերս խարաղանով կը շրջագայի գրական հրատարակչի վրայ: Անոր գլխուստ մտասեւեուումն է ի գէպս և յանգէպս

անոր անոր վրայ յարձակիլ, ո՛չ մէկուն բրածին չհաւնիլ, ամեն բան քաղիլ, ազգին պահասութիւններովը զբաղիլ, անոր անոր թարգմանութիւններուն մէջ սխալներ փնտռել, հոգ չէ թէ զինադադարէն ի վեր չի նիջ առ մը, նոր ու օգտակար գաղափար մը, նորարկէպ մը, գրական էջ մը, կամ արժէք ունեցող ուսումնասիրութիւն մը կը բռնան հանած չըլլայ ինքն, եթէ ոչ միայն քննադատել ու քննադատել — իրուացի կամ անիրաւ: Արդ՝ գրական այս մեծ ասպար չիքնալով հանդուրժել գոյութեանը մէկուն մը որ իրմէն աւելի բարձր կարեւոր խօսիլ և ասոր անոր հարէածներ տալ կամ օտար լիցուի մէջ հմտութիւն ցոյց տալ, յարձակեցաւ Տիգրան Զաւէնի վրայ որ կ'արհամարհէր իր գոյութիւնը:

Յովհաննէս Ապալտ յարգել տալու համար իր հեղինակութիւնը այդ ամբարտաւանին որ իր պահակ կեցած ասին կը համարձակի ֆրանսերէն բացատրութիւններ զործածել կ'իջարձակի Տիգրան Զաւէնի վրայ որուն հայերէնագիտութիւնը արդէն պատին փակուցած էր և հիմա անոր ֆրանսերէնի հմտութիւնն ալ կազդէր տալ իր լոյս տակ ձգել:

Ասկայն այս անգամ արհարտուն կամկը կ'ըսուի Յովհաննէս Ապալտ իր ընդլիմօղի Տիգրան Զաւէնը, այս անգամ փրաւ:

Տիգրան Զաւէն Լիզրէի համբաւաւոր բառարանով՝ որ ֆրանսերէն լիցուի աւետարանը կը համարուի կ'ըսուի ապացուցած էլ թէ կ'ընար ըստի «je perds mon latin» և ջանջախի կերպով կը խարաղանէր ևս պատին ճակատը իր տղտաութիւնը և ամօթապարտ կը թողուր զա՛յն և փոխարէն այս փճախան ու ջանջախի փոստին Ապալտ կ'ապատարտի երուարդ Գոթանձեանի, Տիգրան Զաւէնի, Մալխասի, Կանոնեանի, Մէլիքեանի, Ամերիկեանի, Տիգրան Ապալտեանի, Արշակ Պապիկեանի և ուստի պէս անպահանջաւ հեղինակութեանց, որոնք հեղինակաւոր կարծիքին առջև անչուս կը գտնուի պիտի տար. — բայց Տիգրան Զաւէն ո՛չ:

Մէկ ինքնահաւանին միւս ինքնահաւանը յարգեմ էր:

Վա՛յ յաղթանոցին, վա՛յ նահ հոյքն թերցոյցին, զի ուղիս Տիգրան Զաւէն անգրգիլ պիտի ըլլայ և իր ինքնահաւանութիւնը այս յաղթանակով անգամ մըն ալ կ'ընկապուած արդեօք ի՞նչ զարնեւիլի համեմատութիւններ պիտի առնէ:

Այլու ինք չէ որ պիտի կոչէ «je perds mon latin» այլ իր բոլոր ընթերցողները:

ԱՐԳՈՒՐ ԱՆԳԵՂ ԾԻ

Երկուստ անպահանջներուն մէջ կարեւոր մը կար որ անչուս վրայ ծէ ընթերցողները շատեալ ուշագրութեան:

Ամերիկեան նպատամատոց յանձնաժողովին փոխ-նախագահ Մ. Լանի քննական գործարար Փոքր-Ասիոյ ամերիկեան նպատամատոց յանձնախումբերու ժողով:

Այս լուրը հաճոյք կ'սպասուէ, սա շատ բացորոշ պատճառով որ Մր. Լան՝ որ անչուս անկողնակալ և անաչառ քննիչ մըն է, մտաքն պիտի ուսումնասիրէ այդ յանձնախումբերու գործառնութիւններն և կատարած գերերն զինադադարէ ասզին:

Սե Մր. Լան, կ'իտարտ զործ մը բրած չըլլալու համար, մեծ յոյս ունի որ պիտի բարեւաճի նաե՛ր իզմիր այցելել մտաքն ծանօթանալու աեղ. Էոյս Ամերիկեան նպատամատոցի հըրաշալի և անսպեւտ գործունէութեան:

Գործունէութիւն մը՝ որ կարծեմ նմանը չունի ամբողջ Թուրքիոյ մէջ և նոյնքան վտանգ եմ որ Մր. Լան, տեղոյս նպատամատոցի «հրանալի գործունէութեան» չափազանց շնորհապարտ և սլոպիսի անզուգական գործիչներու կարօտ, անոնք ամենքն ալ պիտի տեղափոխէ ու ցրուէ այնպիսի միջավայրեր, ուր տեղ ըլլի՞ք գործն քիչ մը չափազանց կանոնաւոր ընթացած է, որպէս զի ասոնք հոն քիչ մը արեւելեան դանդաղութիւններով և միմիայն քրիստոնէից չյատկացնին Ամերիկեան ժողովուրդին նուիրած միջոցները...

Կ'ըսեն տեղւոյս Ամերիկեան ըլլի՞ք հոս մը. Լանի այցելութիւնն լըսուելէ շատ առաջ տեղեկութիւն ստացած էր, որովհետեւ վերջերս փեշերն ասթիած ազապատանքով կ'վերաբերուի մասնաւորապէս հայերու նկատմամբ, սակայն միշտ գործածելով իր հին թաղթերը, և փոխանակ մեծանունութեամբ իրեն Ամերիկայէ զրկուած նպատակներ արամադրելու ուր որ անի է, կ'փափաքի որ գիտմունք ըլլան իրեն, այսինքն մուրացկանութեան կուգէ վարժեցնել մեղի, փոխանակ որամայրելու ինչ որ արամադրելի է, փոխարէն շնորհակալութեան նամակով մը հարկ եղած ցուցակագրական անգարագիւր ստանալու:

Կ'ըսուի նուազագէտի մուրել, մեծանունութիւն ու վեհանունութիւն չէ և արուածը իր արժէքը կ'ընդունեն այս շատ տարրական պարագան պէտք էր որ նկատի առնուէր անգրովի անեան մեծ ժողովուրդի մը գաւառներէն, եթէ երբէք անոնք այլապէս չեն ազդեր նկատուել Արեւելի մէջ շատ ապրիներ սպրած ըլլալով:

Անչուս Մր. Լանի կարծիքն պիտի ուզուի այս մասին, երբ որ իզմիր համար, նաեւ ուրիշ կողմ մը բաներու համար ալ և եթէ մտայրի իսկ չէ քաղաքէն անցնելու, կ'ըսուի միջոցն գտնել, անոր ծանօթութիւնն քիչիկ մը կ'ընեն իսկ:

Անոր կարծիքն ինծի համար մեծ կշիռ պիտի ունենայ, վերջական գաղափար մը կազմելու համար միտուաբանութեան ներքի ու ցորի անցողութեան մասին...

ՅՍ

Լ. Ա. Զ. Պ.  
 Ազգ. կեդ. Արամոցի 200 երկրորդ մասնակալի պէտք ըլլալուն, ներկայիս կ'այտարարուի թէ բոլոր անոնք ու կ'փափաքին շնորհեան գործը ստանձնել հաճին իրենց պայմանները ներկայացնել յառաջիկայ կիրակի առտուս մամը 10.30-11.30 կեդ. Արամոցի վարչութեան:











